Հավելված N 1
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2005 թվականի ապրիլի 29 N48Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ _____

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ
(արտադրող-արտահանող)

“ ___ “ _____ 200_ թվական ք._____

_____
(արտադրող ընկերության անվանումը)

_____,

այսուհետ՝ Վաճառող, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և

_____,
(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Գնորդ, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրում օգտագործված հասկացությունները

Բաշխող՝ էլեկտրաէներգիայի (հզորության) բաշխման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Հաղորդող՝ էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Համակարգի օպերատոր՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00^{00}-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24^{00}-ին.

Հաշվարկային կենտրոն՝էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

2. Պայմանագրի առարկան

2.1 Վաճառողը վաճառում, իսկ Գնորդը գնում է էլեկտրաէներգիա (հզորություն)՝ Պայմանագրով սահմանված կարգով:

3. Վաճառքի սակագինը

3.1 Էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագինը սահմանում է Հանձնաժողովը: Օրենքով սահմանված կարգով էլեկտարէներգիան (հզորությունը) կարող է վաճառվել հանձնաժողովի սահմանած սակագնից ավելի ցածր գնով: Էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի գինը ամրագրվում է N1 հավելվածում:

3.2 Հանձնաժողովի կողմից սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Նման դեպքում Կողմերը պարտավոր են համապատասխան փոփոխություններ կատարել N1 հավելվածում:

4.Կողմերի պարտականությունները

4.1 Կողմերը պարտավորվում են ղեկավարվել “Էներգետիկայի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Պայմանագրով, գործունեության լիցենզիայով, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերով:

4.2 Վաճառողը պարտավորվում է.

ա) ապահովել էլեկտրաէներգիայի (հզորության) առաքումը Գնորդին իր սահմանազատման (առաքման) կետերում.

բ) անհապաղ տեղեկացնել Գնորդին, Հաղորդողին, Բաշխողին և Հաշվարկային կենտրոնին իր էլեկտրակայանքներում տեղադրված առ ևտրային հաշվառքի սարքերի խափանման (թերությունների) մասին և ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում Գնորդի մասնակցությամբ վերացնել այն՝ Գնորդի հետ համատեղ կազմված համապատասխան ակտերը ներկայացնելով Հաշվարկային կենտրոնին: Նշված ժամանակահատվածում առ ևտրային հաշվառքի սարքերով չհաշվառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվառվում է Հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 110Ն որոշմամբ հաստատված “Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի” 2.3 կետի համաձայն.

գ) Բաշխողի հետ կնքել էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագիր՝ իր կողմից հաղորդման կամ բաշխման ցանց առաքված և արտահանված էլեկտրաէներգիայի քանակները հաշվեկշռելու համար.

4.3 Գնորդը պարտավորվում է.

ա) գնել Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան (հզորությունը) և վճարել դրա համար՝ Պայմանագրով սահմանված կարգով.

բ) արտահանվող էլեկտրաէներգիայի (հզորության) բեռնվածքի օրական գրաֆիկում փոփոխություն նախատեսելու դեպքում, մինչ և Հաշվարկային ամսվան նախորդող ամսի 20-ը, Վաճառողի և Համակարգի օպերատորի համաձայնեցմանը ներկայացնել էլեկտրաէներգիայի (հզորության) բեռնվածքի օրական գրաֆիկի փոփոխման վերաբերյալ հայտը, որի հիման վրա կնքվում է համաձայնագիր.

5. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվառումը

5.1. Վաճառողի կողմից Գնորդին առաքված էլեկտրաէներգիան (հզորությունը) հաշվառում է Հաշվարկային կենտրոնը՝ Հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 16-ի N149Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման” և 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N110Ն որոշմամբ հաստատված “Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման” կարգերի համաձայն:

5.2. Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ հաշվառքի սարքերի տվյալների հիման վրա Հաշվարկային կենտրոնը կազմում է վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտը և ներկայացնում Կողմերի ստորագրմանը մինչ և Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա_____ -ը:

6.Վճարման կարգը

6.1 Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտը (հավելված N4) ստորագրելուց հետո մինչ և Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Վաճառողն իր կողմից առաքված էլեկտրաէներգիայի (հզորության) համար կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Գնորդին:

6.2 Գնորդը Հաշվարկային ամսվա ընթացքում գնված էլեկտրաէներգիայի (հզորության) դիմաց վճարումը կատարում է մինչ և Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7.2 Պայմանագրի 6.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Գնորդը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

8.Ֆորս մաժորային իրավիճակներ

8.1 Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարաման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի

արտասովոր ուժեղ դրս ևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նա և սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

8.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետ ևանքների վերացման հնարավոր ժամկետները:

9. Լրացուցիչ պայմաններ

9.1 Ներքին պահանջարկի ապահովման նպատակով Համակարգի օպերատորն՝ Հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 16-ի N149Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգի” համաձայն՝ անհրաժեշտության դեպքում դադարեցնում է էլեկտրամատակարարումը Գնորդին՝ այդ մասին տեղեկացնելով Կողմերին:

9.2 Կողմերը պարտավոր են Պայմանագրի պատճենները տրամադրել Հաշվարկային կենտրոնին, Համակարգի օպերատորին և Բաշխողին:

10. Տարաձայնությունների լուծումը

10.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջ և ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

10.2 Եթե տարաձայնության առարկան Հաշվարկային կենտրոնի կողմից ներկայացված վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտն է, ապա ցանկացած դեպքում Կողմերը պարտավոր են ստորագրել այդ ակտը, իսկ Գնորդը պարտավոր է կատարել վճարումը, որից

հետո միայն լուծել տարաձայնությունը: Տարաձայնություն ունեցող կողմը պարտավոր վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ստորագրած ակտին կցել հատուկ կարծիք:

11. Այլ պայմաններ

_____
_____
_____

12. Պայմանագրի գործողության ժամկետը և փոփոխման կարգը

12.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից և գործում է մինչ և 200__թվականի_____ :

12.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

12.3 Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (արտադրող-արտահանող) պայմանագրի նոր օրինակելի ձ և հաստատելու կամ գործող օրինակելի ձ ևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով դրանք Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

12.4 Պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ մեկական Կողմերի և Հանձնաժողովի համար:

13. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը

Հավելված N1 Էլեկտրաէներգիայի (հզորության) գնի մասին համաձայնագիր

Հավելված N2 Էլեկտրաէներգիայի նախնական չափաքանակների և պայմանագրային հզորության մասին համաձայնագիր

Հավելված N3 Վաճառողի սահմանազատման (առաքման) և էլեկտրաէներգիայի հաշվառման կետերի մասին համաձայնագիր

Հավելված N4 Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտ

14. Կողմերի գտնվելու վայրը և հաշվարկային համարները

Վաճառող՝	Գնորդ՝
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը_____
Հ/h _____	Հ/h _____
Հեռախոս	Հեռախոս
Ֆաքս	Ֆաքս
Գործունեության լիցենզիա N	Գործունեության լիցենզիա N
Ղեկավար	Ղեկավար
_____	_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)	(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Գրանցված է “____” _____200__թվական
Գրանցման N _____ Կ.Տ.
Պատասխանատու _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված 1
էլեկտրաէներգիայի (հզորության)
առուվաճառքի
(արտադրող-արտահանող)
200__թվականի _____ “___”N__ պայմանագրի

Համաձայնագիր
էլեկտրաէներգիայի (հզորության) գնի մասին

1. Սույն համաձայնագրով Գնորդը և Վաճառողը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են էլեկտրական էներգիայի (հզորության) հետ կապված սակագնային դրույքները.

   էլեկտրական էներգիայի դրույքը՝ _____ դրամ/կՎտժ.

   հզորության ամսական վճարը՝ _____ դրամ/կՎտ.

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Վաճառողի համար հաստատված գործող սակագինը հետևյալն է.

   էլեկտրական էներգիայի դրույքը՝ _____ դրամ/կՎտժ.

   հզորության ամսական վճարը՝ _____ դրամ/կՎտ:

3. Էլեկտրաէներգիայի (հզորության) գինը ուժի մեջ է մտնում 200_ թվականի _____ “___” -ից և գործում է մինչև 200_ թվականի _____ “___” -ը:

4. Հզորության ամսական վճարը լրացվում է այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան պլանում չներգրավված և Բաշխողի կողմից չպատվիրված արտադրող հզորությունների հաշվին:

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ
_____	_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)	(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)
“__”_____200__թվական	“__”_____200__թվական
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
էլեկտրաէներգիայի
(հզորության)առուվաճառքի
(արտադրող-արտահանող)
200__թվականի _____ “___”N__պայմանագրի

Համաձայնագիր
էլեկտրաէներգիայի նախնական չափաքանակների և պայմանագրային հզորության մասին

1. Սույն համաձայնագրով Գնորդը և Վաճառողը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են արտահանվող էլեկտրաէներգիայի նախնական չափաքանակները և պայմանագրային հզորությունների հետ կապված մակարդակները.

	Ակտիվ հզորություն(կՎտ)		Էլեկտրաէներգիայի գնման նախնական չափաքանակներ (կՎտժ)
	Պայմանագրային	Տնօրինելի	
Հունվար			
Փետրվար			
Մարտ			
Ապրիլ			
Մայիս			
Հունիս			
Հուլիս			
Օգոստոս			
Սեպտեմբեր			
Հոկտեմբեր			
Նոյեմբեր			
Դեկտեմբեր			

2. Եթե որ եւէ ամսվա ընթացքում նախատեսվում են ակտիվ հզորության պայմանագրային պատրաստականության տարբեր մակարդակներ, ապա աղյուսակում նշվում են այդ մակարդակները (կՎտ) և դրանց տ ևողությունները (օր):
3. Սույն համաձայնագրի 1-ին կետում նշված աղյուսակում լրացված էլեկտրաէներգիայի գնման նախնական չափաքանակները չեն հանդիսանում պայմանագրային մեծություն:
4. Պայմանագրային հզորություն այունակը լրացվում է այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան պլանում չներգրավված և Բաշխողի կողմից չպատվիրված արտադրող հզորությունների հաշվին:

ՎԱՃԱՌՈՂ ԳՆՈՐԴ

_____ _____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն) (պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

“___”_____200__թվական “___”_____200__թվական

Կ.Տ. Կ.Տ.

Համաձայնեցված է
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ

_____
(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)
“___”_____200__թվական Կ.Տ.

Հավելված N 3
էլեկտրաէներգիայի
(հզորության)առուվաճառքի
(արտադրող-արտահանող)
200__թվականի _____ “___”N__պայմանագրի

Համաձայնագիր

Վաճառողի սահմանազատման (առաքման) և էլեկտրաէներգիայի հաշվառման կետերի մասին

1. _____ -ի (Վաճառող) սահմանազատման (առաքման) կետերն են.

2. Առ ևտրային և վերստուգիչ հաշվառքի կետերը

Առ ևտրային հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը	Առ ևտրային հաշվառքի սարքերի համարը	Հոսանքի և լարման տր-ների փոխարկման գործակիցները			Վերահսկիչ հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը, N և տեսակը	Հոսանքի և լարման տր-ների փոխարկման գործակիցները		
		$K_{հտ}$	$K_{լտ}$	$K_{հտ} \cdot K_{լտ}$		$K_{հտ}$	$K_{լտ}$	$K_{հտ} \cdot K_{լտ}$

Առ ևտրային հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է_____
_____ -ը:

Վերստուգիչ հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____
_____ -ը:

ՎԱՃԱՌՈՂ ԳՆՈՐԴ

_____ _____
(պաշտոն,ստորագրություն, անուն, ազգանուն) (պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

“___”_____200__թվական “___”_____200__թվական

Կ.Տ. Կ.Տ.

Համաձայնեցված է
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

_____
(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

“___”_____200__թվական
Կ.Տ

Հավելված N 4

էլեկտրաէներգիայի
(հզորության)առուվաճառքի
(արտադրող-արտահանող)
200__թվականի _____ “___”N__պայմանագրի

ԱԿՏ

Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ

Գնորդ_____

Վաճառող_____

Հաշվարկային ժամանակաշրջան “___” _____ 200__թվականից մինչ և “__” ____ 200_թվականը

Ընդամենը առաքված էլեկտրական էներգիայի քանակությունը՝ _____ կՎտժ

Գնորդ_____

Վաճառող_____

Հաշվարկային ժամանակաշրջան “___” _____ 200__թվականից մինչ և “__” ____ 200_թվականը

Վճարման ենթակա հզորությունները

“___” _____ 200__թ. մինչ և “__” ____ 200_թ, _____կՎտ

“___” _____ 200__թ. մինչ և “__” ____ 200_թ,_____կՎտ

“___” _____ 200__թ. մինչ և “__” ____ 200_թ, _____ կՎտ

Հիմքը_____

_____

Վճարման ենթակա հզորության այունակը լրացվում է այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան պլանում չներգրավված և Բաշխողի կողմից չպատվիրված արտադրող հզորությունների հաշվին:

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ
_____	_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)	(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)
“___”_____200__թվական	“___”_____200__թվական
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

_____

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

“__”_____200__թվական Կ.Տ.